

ԴԵՊԻ ԼՈՆՏՈՆ՝ ՊՈԼԻՍԻ ՎՐԱՅՈՎ

7 Յունիս 2000, Հինգշաբթի. կեսօրէ ետք Թորգոմ Պատրիարք Սրբազան Հայր Թէլ Ավիվի Պէն-Գուրիօն օդակայանէն սկսաւ Լոնտոնեան ուղեւորութիւնը, որ պիտի տեւէր մինչեւ 12 Յունիս: Պատրիարք Սրբազան Հօր կ'ուղեկցէր Իսահակ Արդ. Միմասեան:

Երեկոյացել էր, երբ հասանք Իսթանպուլի Աթա-թիւրք օդակայանը, ուր Պատրիարք Սրբազան Հայրը դիմաւորելու եկած էին Լուսարարապետ Տ. Արամ Եպս. Աթէշեան եւ Տ. Սահակ Արդ. Մաշալեան (նախկին Տեսուչ Երուսաղէմի Ս. Թարգմանչաց Վարժարանի):

Պոլսոյ ծովափնեայ պանդոկի մը մէջ տեղաւորուելէ եւ դադարէ մը ետք ուղեւորութեանմէ դէպի Պոլսահայոց Պէյօղլու թաղամասի Ս. Երրորդութիւն եկեղեցին: Զոյգ Աթոռներու գահակալներ ողջագուրութեան եւ իրենց աղօթքը ըրին եկեղեցւոյ մէջ:

Ժողովուրդը կամաց կամաց կը հաւաքուէր: Էսայեան Վարժարանի բակին մէջ անակնկալ մը կը սպասուէր Թորգոմ Պատրիարք Սրբազան Հօր: Այդ անակնկալն էր «Օրագրութիւն սարկաւագի» եւ «Քառասունք Ձեռնադրութեան» միացեալ հատորին հանդիսաւորապէս նշելու գինեծօնը:

Բացօթեայ յայտագիրը սկսաւ երեկոյեան ժամը 8ին նախագահութեամբ գոյգ Պատրիարքներու, ինչպէս նաեւ մասնակցութեամբը հոգեւորականաց դասու եւ 100է աւելի հանդիսականներու: Պոլսոյ Աթոռէն ներկայ էին Տ. Շահան Արք. Սվանեան եւ Տ. Արամ Եպս. Աթէշեան, համայնքի հովիւ Տ. Միւռոն Աւ. Քահանայ Այվազեան: Եկեղեցական հիւրերու շարքին էին Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Տ. Խաթակ Արք. Պարսամեան եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մատենադարանի տնօրէն Տ. Վարդան Արք. Դեմիրճեան: Վերջիններս յաջորդաբար կարդացին շնորհաւորական մամակները Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի, որոնք նոյնպէս անակնկալի մաս կը կազմէին:

Թայտագիրը կը վարէր Վաղարշակ Զալեան որ ծանուցեց հանդէսին ընթացքը: «Արաս» Հրատարակչութեան (Հատորին տպագրութեան վայրը) տպարանատէր Եղուարդ Թովմասեան հակիրճ կերպով կարդաց Պատրիարք Սրբազան Հօր կենսագրութիւնը: Օրուան բանախօսն էր Դոցենտ Դոկտոր Վարդ-Շիկահեբը: Ան ներկայացուց համառօտ պատկերներ հատորէն՝ ցոյց տալով հեղինակին դեռ այն ժամանակ ցոլացող կայծերը տաղանդին:

Արտաշէս Մարկոսեանին դասաւորած եւ սրբագրած գիրքին գեղեցիկ կտորներէն ասմունքեց Սիլվա Կոմիկեան, որ կենդանացուց նկարագրուած իրականութիւնները:

Մերոպ Պատրիարք Հայրը երախտագիտութեան եւ մեծարանքի պարտով մը արտայայտուեց Պատրիարք Սրբազան Հօր մասին, որ հատուցած է արդար ծառայի իր վաստակը, վեց տասնեակ տարիներէ աւելի գոհարեւելով իր կեանքը խօսքով, գրչով եւ վարչական իրենց յատուկ եղանակով եկեղեցւոյ անդաստանին մէջ:

Արտայայտուեցաւ Թորգոմ Պատրիարք Սրբազան:

Իր հոգիին պատեառած յուզմունքն ու հրեռանքն անպատսպարելի էին: Պատրիարք Սրբազան Հայրն ունկնդիր մատած մէկ ու կէս ժամուայ մէջ ապրած էր իր անցած պատանեկութեան եւ երիտասարդութեան թանկագին ու անդառնալի պահերը:

Պատրիարք Սրբազան Հայր անհատապես շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց ովքեր սատարած են գիրքին տպագրութեանը, եւ այդ առիթով ալ կազմակերպուած երեկոյթի իրականացման մասնակիցներուն: Յայտագիրն աւարտուած էր:

Մեսրոպ Պատրիարք Հայր ծանուցեց որ Թորգոմ Պատրիարք Հօր մակագրութեամբ «Օրագրութիւն սարկաւազի» եւ «Քառասունմ Զեռնադրութեան» միացեալ հատորին բաժանումը եւ մակագրումը պիտի ըլլայ տեղւոյն վրայ: Ուշ երեկոյ էր, գիրք վերցնողներու շարանը մինչ խնդուել էր Պատրիարք Հօր շուրջը:

Տեղական թերթերէն կային լրագրողներ, ըլլայ հայ կամ թուրք:

Բացօթեայ հիւրասիրութիւնը հետեւեցաւ յայտագիրին, որու կազմակերպութեան մէջ իրենց մասնակցութիւնն ունէին Բերայի Ս. Նկեղեցեաց Թաղային Խորհուրդը, Էսայեան Լէկէոնի տնօրինութիւնը, Էսայեան Սանուց Միութիւնը:

Նոյն օրը ուշ երեկոյեան, ի պատիւ Ամեն. Թորգոմ Պատրիարք Սրբազան Հօր Ազգային Հիւանդանոցի տեսչութեան տնօրինութեամբ ընթրիք տրուեցաւ 'DIVAN' պանդոկին մէջ, ուր ներկայ էին գոյգ Պատրիարքներ, Սրբազան ու հոգեւոր հայրեր, հրաւիրեալ ազգայիններ: Պատրիարք Սրբազաններու գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքերէն յետոյ ամբողջ երեկոյթը կազմակերպողներուն, արտայայտուեցաւ «Մարմարա» թերթի խմբագիր Տիար Ռոպեր Հատտենեան, գրագէտ եւ բազմաթիւ հատորներու հեղինակ, որ ներկայ ընկերութեան մշակութային հետաքրքրութեանց մակարդակին անդրադառնալով, գնահատելի գտաւ Մեսրոպ Պատրիարք Հօր նախաձեռնող եւ փաջաւերող ոգին, աշխոյժ պահելու համար հասարակութեան կապը մշակութային ձեռնարկներուն հետ:

Ամերիկայէն ժամանած էին 150է աւելի հայորդիներ, որոնք պիտի անցնէին Հայ-Թուրքական սահմանը՝ ուխտագնացութեամբ դէպի Կեսարիա եւ Արեւմտեան Հայաստանի պատմական վայրերը:

ԼՈՆՏՈՆԻ Ս. ՆՂԻՇԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՈՒՄԸ

7 Յունիս 2001, Հինգշաբթի. կէսօրէ ետք Թորգոմ Պատրիարք Սրբազան Հայր մեկօրեայ այցով Պոլիսէն անցաւ եւ յաջորդ միջօրէին ուղեւորուեցանք դէպի Լոնտոն, մասնակցելու համար վերանորոգուած Ս. Նղիշէ եկեղեցւոյ օծումին, քարեքարութեամբ Տէր եւ Տիկին Վաչէ եւ Թամար Մանուկեանի:

Հրաւիրեալ Հոգեւորականաց Դասն հիւրընկալուեցաւ Լոնտոնի 'Hyatt Carlton Tower' պանդոկին մէջ, ուր հասանք Ուրբաթ երեկոյեան: Կէսգիշերէն առաջ պանդոկ ժամանեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Գարեգին Բ. Ս. Էջմիածինէն:

9 Յունիս, Շաբաթ. երեկոյեան, Տիար Վաչէ Մանուկեան հանդիսաւորելու համար իր տիկնոջ՝ Թամար Մանուկեանի 40 ամեակը, Ուիմսօրի մէջ իրենց սեփական կալուածին վրայ կանգնուած ընդարձակ վրաններու ներքեւ սարքած էր տարեդարձի ճաշկերոյթ, նուագախումբի եւ երգչախումբի յայտագիրներով:

Յետ միջօրէին Ս. Նղիշէ եկեղեցւոյ սիւններու եւ միւս խորաններու Օծման արարողութիւնը տեղի ունեցաւ կէսօրէ վերջ ժամը 4ին, ձերամբ թեմական

առաջնորդ Նաթան Եպս. Յովհաննիսեանի եւ մախորդ առաջնորդ Տ. Եղիշէ Արք. Կիզիբեանի:

Պատրիարք Սրբազան Հօր կարգադրութեամբ, արարողութեան մասնակցեցաւ ման Ս. Յակոբեանց Միաբան Տ. Աւետիս Արդ. Իփրանեան: Հայր Սուրբը Լոնտոն կը գտնուէր Հայոց Պատրիարքարանիս կողմէ Լոնտոնի Բրիտանական Գրադարանին մէջ ցուցադրուած ցուցամուշները ստանձնելու եւ Նրուսադէմ վերադարձնելու նպատակով:

10 Յունիս, Կիրակի. Լոնտոնի Ս. Եղիշէ եկեղեցւոյ օծման արարողութիւնը տեղի պիտի ունենար ձերամբ Վեհափառ Հայրապետ Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Վեհափառ Հայրապետն ու Պատրիարք Սրբազան Հայրը Կիրակի առաւօտեան ուղեւորութեան դէպի Ս. Սարգիս եկեղեցի, որ կառուցուել էր Ս. Աթոռոյ ազգանուէր քարերար Գալուստ Կիւլպենկեանի միջոցներով: Պատարագի ընթացքին Վեհափառ Հայրապետին կողմէ «1700 Ամեակի» շքանշաններով պարգեւատրութեան Տէր եւ Տիկին ձօրն Քրքչեանները ու Ճան Քրքչեան, իրենց կատարած եկեղեցաշէն գործունէութիւններու համար, ըլլայ այն Հայաստանի թէ սփիւռքին մէջ:

Ս. Եղիշէ եկեղեցւոյ Օծման սրբազան արարողութիւնը տեղի ունեցաւ մոյն օրը երեկոյեան ժամը 6ին: Օրուայ պատարագիչն էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը՝ առընթերակայութեամբ թեմական առաջնորդ Տ. Նաթան Եպս. Յովհաննիսեանի եւ Գանատայի թեմի առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտեբանի, աղօթակից ներկայութեամբ Նրուսադէմի Հայ Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի, Ամերիկայի Արեւմտեան եւ Արեւելեան հայոց թեմերու թեմակալ առաջնորդներ Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի եւ Տ. Խաժակ Արք. Պարսամբանի, Արեւմտեան Նիքոպայի Հայրապետական Պատուիրակ եւ Բարիգի հայոց առաջնորդ Տ. Գիւտ Արք. Նազգաշեանի, Մեծն Բրիտանիոյ հայոց մախորդ առաջնորդ Տ. Եղիշէ Արք. Կիզիբեանի եւ Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանի դասախօս Տ. Տաթեւ Արք. Սարգսեանի:

Տէր եւ Տիկին Վաչէ եւ Թամար Մանուկեաններու ազգանուէր քարերարութեամբ աշխարհի տարբեր կողմերէն Լոնտոն ժամաներ էին աւելի քան 450 անձեր, հայ եւ օտար կրօնական ու պետական ներկայացուցիչներ, որոնց մէջ յիշատակելի են ՀՀ մախկին մախագահ Պրն. Լեւոն Տէր-Պետրոսեան եւ իր Տիկինը, Հայաստանի Ազգ. Ժողովի մախկին մախագահ Բարկէն Արաքցեանը եւ իր Տիկինը, Սուրիոյ փոխմախագահ Ապտէլ Հալիմ Խատտամի եւ իր Տիկինը, Լիբանանի վարչապետ Հարիրիի Տիկինը, աւելի քան 14 հիւպատոսներ եւ այլ մեծամեծներ:

Աջակողմեան դասու առաջին շարքին մէջ էին Անկլիքան Եկեղեցւոյ պետ Քենթըրպըրիի Արքեպիսկոպոս ձորն Քէրրին, Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ, Կաթողիկէ եւ Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու առաջնորդներ եւ ներկայացուցիչներ:

Յընթացք Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի ձերամբ եւ օրհնութեամբ պարգեւատրութեան ազգային մեծ քարերարներ Վաչէ եւ Թամար Մանուկեաններ, եւ Մայր Տիկ. Սիրան Մանուկեան՝ Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօն հոշակման 1700 ամեակին մուրրուած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քարձրագոյն շքանշաններով:

առաջնորդ Նաթան Եպս. Յովհաննիսեանի եւ մախորդ առաջնորդ Տ. Նղիշէ Արք. Կիզիբեանի:

Պատրիարք Սրբազան Հօր կարգադրութեամբ, արարողութեան մասնակցեցաւ մաւր Ս. Յակոբեանց Միաբան Տ. Աւետիս Արք. Իփրանեան: Հայր Սուրբը Լոնտոն կը գտնուէր Հայոց Պատրիարքարանիս կողմէ Լոնտոնի Բրիտանական Գրադարանին մէջ ցուցադրուած ցուցանմուշները ստանձնելու եւ Երուսաղէմ վերադարձնելու նպատակով:

10 Յունիս, Կիրակի. Լոնտոնի Ս. Նղիշէ եկեղեցւոյ օծման արարողութիւնը տեղի պիտի ունենար ձերամբ Վեհափառ Հայրապետ Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Վեհափառ Հայրապետն ու Պատրիարք Սրբազան Հայրը Կիրակի առաւօտեան ուղեւորուեցան դէպի Ս. Սարգիս եկեղեցի, որ կառուցուել էր Ս. Աթոռոյ ազգանուէր քարերար Գալուստ Կիւլպենկեանի միջոցներով: Պատարագի ընթացքին Վեհափառ Հայրապետին կողմէ «1700 Ամեակի» շքանշաններով պարգեւատրուեցան Տէր եւ Տիկին Ճօրն Քրքչեանները ու Ճան Քրքչեան, իրենց կատարած եկեղեցաշէն գործունէութիւններու համար, ըլլայ այն Հայաստանի թէ սփիւռքին մէջ:

Ս. Նղիշէ եկեղեցւոյ Օծման սրբազան արարողութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը երեկոյեան ժամը 6ին: Օրուայ պատարագիչն էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը՝ առընթերակայութեամբ թեմական առաջնորդ Տ. Նաթան Եպս. Յովհաննիսեանի եւ Գանատայի թեմի առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, աղօթակից ներկայութեամբ Երուսաղէմի Հայ Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի, Ամերիկայի Արեւմտեան եւ Արեւելեան հայոց թեմերու թեմակալ առաջնորդներ Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի եւ Տ. Խաժակ Արք. Պարսամբեանի, Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ եւ Բարիգի հայոց առաջնորդ Տ. Գիւտ Արք. Նազգաշեանի, Մեծֆ Բրիտանիոյ հայոց մախորդ առաջնորդ Տ. Նղիշէ Արք. Կիզիբեանի եւ Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի դասախօս Տ. Տաթեւ Արք. Սարգսեանի:

Տէր եւ Տիկին Վաչէ եւ Թամար Մանուկեաններու ազգանուէր քարերարութեամբ աշխարհի տարբեր կողմերէն Լոնտոն ժամաներ էին աւելի քան 450 անձեր, հայ եւ օտար կրօնական ու պետական ներկայացուցիչներ, որոնց մէջ յիշատակելի են ՀՀ նախկին նախագահ Պրն. Լեւոն Տէր-Պետրոսեան եւ իր Տիկինը, Հայաստանի Ազգ. Ժողովի նախկին նախագահ Բարկէն Արաքցեանը եւ իր Տիկինը, Սուրիոյ փոխնախագահ Ապտէլ Հալիմ Խատտամի եւ իր Տիկինը, Լիբանանի վարչապետ Հարիրիի Տիկինը, աւելի քան 14 հիւպատոսներ եւ այլ մեծամեծներ:

Աջակողմեան դասու առաջին շարքին մէջ էին Անկլիկան Եկեղեցւոյ պետ Քենթըրպըրիի Արքեպիսկոպոս Ճօրն Քէրրին, Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ, Կաթողիկէ եւ Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու առաջնորդներ եւ ներկայացուցիչներ:

Յընթացք Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի ձերամբ եւ օրհնութեամբ պարգեւատրուեցան ազգային մեծ քարերարներ Վաչէ եւ Թամար Մանուկեաններ, եւ Մայր Տիկ. Սիրան Մանուկեան՝ Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700 ամեակին նուիրուած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն շքանշաններով:

Գալով եկեղեցւոյ վերանուանման եւ վերանորոգման կարելի է յիշատակել այն կարեւոր փաստը, որով մեծանուն քարերար Վաչէ Մանուկեան իր հանգուցեալ հօր՝ Նղիշէ Մանուկեանի յիշատակն յաւերժացնելու նպատակով, պատրաստ գտնուեցաւ գնելու նախկին Ս. Պետրոս եկեղեցին: Եկեղեցին 20 տարիէն վերադարձնելու պայմանաժամով Անգլիկան եկեղեցւոյ կողմէ տրամադրուած էր Լոնտոնահայ համայնքին: Երեք տարի տեւող վերանորոգչական աշխատանքներէն վերջ եկեղեցին վերստին վերադարձուեց հայութեանը՝ գնահատուելով 15 միլիոն ԱՄՆ տոլար: Եկեղեցւոյն նման շէնդութիւն եւ հանգստաւտութիւն տալու (1150 յարմարաւետ աթոռներ) նպատակներէն մին ալ եղած է կարեւորութիւնը երգչախմբային եւ նուագախմբային կատարումներու:

Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան Պաշտօն քարերար Վաչէ Մանուկեանի հանգուցեալ հօր՝ Նղիշէ Մանուկեանի հոգւոյն ի հանգիստ:

Երեսանի Կամերային Երգչախումբը՝ ղեկավարութեամբ Ռոբերթ Մլէեանի, բառաձայն երգեցողութեամբ ներդաշնակօրէն կատարեց Ս. Պատարագի Դպրաց Դասի քաժինը:

Ներկաներու ձեռքին կար նոր տպուած հայերէն-անգլերէն գեղատիպ գրքոյկ մը Ս. Պատարագին հետեւելու համար:

Նոյն երեկոյեան, Լոնտոնի երկու հռչակաւոր ճաշարաններու մէջ, արտասահմանէն ժամանած հիւրեր եւ պետական ներկայացուցիչներ հիւրընկալուեցան, ուր քաժականառով ալ արտայայտուողներ եղան:

11 Յունիս, Երկուշաբթի. «Լորտերու Տան» գետեգրեայ շէնքին մէջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ի պատիւ հիւրասիրութիւն եւ գնահատական արտայայտութիւններ եղան հարիւրէ աւելի հրաւիրեալ անձնաւորութեանց ներկայութեան:

12 Յունիս, Երեքշաբթի. Ս. Նղիշէ նորած եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ տօնական համերգ Հայաստանի Ազգային Կամերային նուագախումբի կատարմամբ, որն ղեկավարեց Արամ Ղարաբէկեան: Համերգն ամփոփեց Լոնտոնեան տօնակատութիւնները ամէն մարդու հայեացքն ուղղելով դէպի նորանոր սպասուող հանդիսութիւններ այս անգամ արդէն Հայաստանին մէջ:

Դէպի Երուսաղէմ վերադարձին, Յունիս 13-16 Պատրիարք Սրբազան Հայրը Բարիզի մէջ հանդիպեցաւ իր եօթանասուն տարիներու մտերիմ քարեկամին, Տէք. Կարօ Կարապետեանին, գրագէտ եւ քանաստեղծ Անելին, որ ֆիզիքական ծանր հիւանդութեամբ, իր գաւակին, Տէք. Վիգէն Կարապետեանի տանը մէջ կը հոգատարուէր: Կը զգային թէ այս իրենց վերջին տեսութիւնը պիտի լինէր:

Պատրիարք Սրբազան Հայրը առիթ ունեցաւ նաեւ Բարիզի մէջ Հայաստանի Դեսպան Տիար Նդուարդ Նալպանդեանի եւ իր տիկնոջ հետ տեսակցելու եւ իրենց քնակարանին մէջ հիւրասիրուելու:

Յունիս 16ին, Աստուծոյ Նախախնամութեամբ ապահով վերադարձանք դէպի Մայրավանք, Երուսաղէմ:

ԻՍԱՀԱԿ ԱՐԴ. ՄԻՆԱՍԵԱՆ